279. ԽԱՉՔԱՐ, մեծ և գեղաքանդակ, ընկած է Ամենափրկիչ վանքի մոտ, ստորին մասում 3 տող.

ԷՍՍԷԻԱԵԱՅԿ
ԱՆԳԵՅԻՉԽԱՅ
ՍՈՐԵԷՅԻ՝

ԷՍ ՍԵԻԱՏԱՑ Կ|ԱՆԳ|ՆՅԵՑԻ ՉԽԱՉ|Ս ՈՐՏԷՑ ԻՄ.

Դատող. Տ տառը երկու դեպքում էլ գրված է անսովոր ձևով. կարելի է երկու դեպքում էլ Դ կարդալ։ ԽԱՉ բառը նույնպես անսովոր ԽԱՑ ձևով է գրված։ ՈՐՏԵՑ-հավասար ՈՐԴԵԱՑ։ Համարում ենք XIII դարի։

280. ԽԱՉՔԱՐԻ վրա, որը դանվելիս է եղել Թխախոռ գյուղաաեղու մոտի մատուռի գերեզմանատան մեջ.

Թ|Վ՚Ի|ՅՑ| :ՈՂԵ: (1226). Ես Սարգիս, որդի Բագար[ատայ] կանգնեցի զխաչս մաւր իմոյ Ազ(իզիճ):

Հրատ. Բարխուդարեանց, 190 (իր լրացումներով)։

281. ԽԱՉՔԱՐԻ վրա, որը գտնվելիս է եղել գյուղամիջի ս. Աստվածածին եկեղեցու մուտքի մոտ.

:ՈՂԸ: (1249). Ես Սարգիս, որդի Ապահայ եկի աւտար աշխարհ. կալայ հազս մայր իմ Շահինսար. յաղաւթս յիշեցէք:

Մեկնող. Կալայ հազս մայր իմ կապակցությունը Բարխուդարյանցը հասկացել է շալակեցի մայրս. Աճառյանը՝ հոգս մայր է վերծանել (Անձ., Դ, 422)։

Հրատ. Բարխուդարեանց, 190։

15. ՄԵՀՄԱՆԱ ԳՅՈՒՂ

Գյուղը հայտնի է իր արծաթահանքով և հույն բնակչությամբ։

Գյուղից մոտ երեք կիլոմետր հյուսիս-արևելք մի անտառուտ բլրի վրա գտնվում է փոքր, թաղածածկ, անտաշ քարերով շինված եկեղեցի. բակում կան ավերակների հիմնապատեր ու անարձանագիր մեծ տապանաքարեր։

Եկեղեցու ծածկն ամբողջովին փլած է, իսկ ներքուստ կրաշաղախի ծեփը մեծ մասամբ թափված։

Տեղացի հույների մոտ եկեղեցին հայտնի է «Պանաիա» անունով, որ նշանակում է ս. Աստվածածին։

Այստեղ եղած երկու կարևոր արձանագրությունն էլ հրատարակվում են առաջին անգամ։

283. ԽԱՉՔԱՐ, կոթողանման, նեղ ու բարձր, չորս երեսները լավ մշակված, ընկած է ե՛ԷՀ՚ԷՀ՚ աստվածածին մատուռի առաջ. թիկունքին մնացել է 18 տող.



ԹԻՒ :ՈՂԹ: (1250).| Ի ԺԱՄԱՆԱԿՍ Թ|ԱԹԱՐԻՆ ԳԼԽ|ԱՒՈՐ ԶԱՐՄԱՂԱՆ| ԶԱՂԱ-ՏԱՑ. ԵՍ ՏՐ.|ՆԵՐՍԱՑՍ ՑԱ|ԶԳԵ ՊԱՑՏԿԱՆԱ|ԿԱՆՑ ԵՒ ՄԱՐԵՄ|ԱՆՑ, ՇԻՆԵՑԻ ԶԵԿ|ԵՐԴԵՑԼԻ|ՅՔՍ, ԿԱԹՈՂԻԿ|ՈՍԱՐԱՆՆ ԵՒ ՄԱՍՐ|ՈՑ ԵՒ ԿԱՆԳՆԵՑԻ Զ|ԽԱՉՍ, ԲԱՐԵԽԱՐԻ|Ս ԱՌ Ա՛Ծ. Ի ԴԱՌՆ| ԺԱՄԱՆԱԿԻ. ԵՍ ԱՐԱՂԳՍ ԲԱՐԻ ՄՏԱ|ՐԻՔ . .

. . . |ԵԼՊԻՍԿՈՊՈՍ . . . .

Ծանոթ. Մնացածի վերջին երկու տողերի ծայրերի մասերը կոտրված են, վերջին տողերը չկան։ Գծագրում անճշտություններ կան (խմբ.)։

Լուսանկ. 77

282 ԵԿԵՂԵՑՈՒ արևմտյան պատի հյուսիսային վերին մասում, արտաքուստ, երկու քարերի վրա 9 տող.



ԹԻՒՆ :ՈՂԸ: (1249)| Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԹԱԹԱՐԻՆ, Ի Տ|ԻՐՈՒԹԵ. ՄԵԾ ԽԱՂԱՂԱ-ՐԱՐ ԱԻԱ|ԳԻՆ, Ի ՊԱՐՈՆՈՒԹԵ ԳՐԻԳՈՐՈՑ|, ԵՍ ՏՐ. ՆԵՐՍԱՑՍ ԵՒ ԱԿՈ[Ո]Ր ԵՒ ՓԱԽԶԱՆ ՇԻՆԵՑԱ|Ք ԶԵԿԵՂԵՑԻՍ, ՑԻՇԱՏԱԿ Մ|ԵԶ ԵՒ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ. ՈՎ| ԱՇԽԱՏԵԱԼ Ե ԱԾ. ՈՂՈՐՄԻ:

Լուսանկ. 76

16. ԿՈՒՍԱՊԱՏ ԳՅՈՒՂ, ՀԻՆ ՄՈԽՐԱԹԱՂ ԳՅՈՒՂԱՏԵՂ ԵՎ ԻՆՆ ՄԱՍ ԱՆԱՊԱՏ

Կուսապատ գյուղում եղել է սբ. Աստվածածին անունով եկեղեցի, որի պատերի մեջ դրված են հին խաչքարեր և տապանաքարեր։ Եկեղեցին այժմ գոյություն չունի, երկու արձանագրությունն առնում ենք Բարխուդարյանցից։ Ջալալյանցը նշում է, որ շինված է եղել «Ռձվե» (1686) թ.[1]։

Հին Մոխրաթաղ գյուղատեղի, գտնվում է Կուսապատ գյուղից հյուսիս՝ մի բարձրադիր հարթության վրա, որի երկու կողմում խոր ձորեր են։ XIX դարում գյուղը տեղափոխել են ներքև՝ դաշտավայրը։ Գյուղի տների հետքերը բոլորովին հարթվել են, կանգուն և կիսավեր վիճակում մնում են Ինն մաս անապատը և Մելիք Իսրայելյանների ապարանքը։

Ինն մաս անապատը գտնվում է գյուղատեղի հարավային եզրին, ձորաբերանի մոտ. թաղակապ հասարակ շենք է։ Պատերին եղած երկու արձանագրությունը հայտնում են, որ այն շինվել է 1881 թ., իսկ սեղանը 1884 թ. (դրանք չենք վերցնում), բայց ինչպես շենքի կառուցման ձևերը, այնպես էլ շուրջը եղած տապանաքարերն ու նրանց տապանագրերն ապացուցում են, որ XIX դարում մեծ նորոգումներ են կատարվել միայն։

Մելիք Իսրայելյանների ապարանքը գտնվում է անապատից մոտ 200 մետր հեռու. պարսպափակ մի ընդարձակ տարածություն է, բազմաթիվ կանգուն և կիսավեր շենքերի մնացորդներով։ Պարսպին կից գրեթե ամբողջական վիճակում մնում են 3—4 մեծ դահլիճներ՝ թաղածածկ և սրբատաշ քարով, ներսից պատերի մեջ կան խորշեր և դարակներ՝ տնային իրերի համար։ Դրանք քաղաքացիական ճարտարապետության լավագույն նմուշներ են և արժանի հատուկ ուսումնասիրության։ Հնում այդ շենքերից երկուսի մուտքերի վրա եղել են արձանագրություններ, որոնք այժմ քանդված են, առնում ենք Բարխուդարյանցից։

[1] Ջալալեանց, I, 180։